

**ԱՄԲՈՂՋ ՅՈՒՑԻՉՈՎ ԱՍՏԻՃԱՆ
ՄԻԱՆԴԱՄՆԵՐ ԵՎ ԲԱԶՄԱՆԴԱՄՆԵՐ
ՌԱՑԻՈՆԱԼ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

§ 4. ԿՐՃԱՏ ԲԱԶՄԱՊԱՏԿՄԱՆ ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

**2. Քառակուսիների տարբերություն,
խորանարդների գումարը և տարբերությունը**

Օրինակ 5: $p^6 - q^6$ բազմանդամը վերածենք արտադրիչների:

Լուծում: Ամենից առաջ տվյալ արտահայտությունը ներկայացնենք քառակուսիների տարբերության տեսքով.

$$p^6 - q^6 = (p^3)^2 - (q^3)^2:$$

Կիրառելով $a^2 - b^2 = (a + b)(a - b)$ բանաձևը, վերջին արտահայտությունը կներկայացվի

$$(p^3 + q^3)(p^3 - q^3)$$

տեսքով: Ի վերջո, (1) և (2) բանաձևերի կիրառմամբ կունենանք հետևյալ նույնությունը՝

$$(p^3 + q^3)(p^3 - q^3) = (p + q)(p^2 - pq + q^2)(p - q)(p^2 + pq + q^2):$$

Այսպիսով.

$$p^6 - q^6 = (p - q)(p + q)(p^2 - pq + q^2)(p^2 + pq + q^2):$$